ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 ապրիլի 2025 թվականի N 1-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 65-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 1.2-րդ մասով, 69-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 12-Ա որոշումը և 2025 թվականի ապրիլի 14 -ի «Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» արձանագրությունը. *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 16-ի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ՋԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ԱՎԱԳԱՆԻ Է. ԹՈՐՈՍՅԱՆ

2025 թ. ապրիլի 16

գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 16-ի N 1- Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ
/Զեկ.՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2025 թվականի N 2-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 6-ի N 12-Ա որոշումը. *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների արդյունքներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի նորընտիր ավագանու լիազորությունների ստանձնման օր սահմանել 2025 թվականի ապրիլի 16-ը:
2. 2025 թվականի ապրիլի 16-ի առաջին նիստի գումարման պահից ավարտված համարել նախորդ ավագանու լիազորությունների ժամկետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ԱՎԱԳԱՆԻ Է. ԹՈՐՈՍՅԱՆ

2025 թ. ապրիլի 16

գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 ապրիլի 2025 թվականի N 3-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի պահանջներով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 6-ի N12-Ա որոշումը. *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրությունների արդյունքներով ընտրությանը մասնակցող ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին ստացած «Միասնություն» կուսակցությունների դաշինքի թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող Վալոդյա Լևոնի Գրիգորյանն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի օրենքի ուժով ընտրված համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնման օր սահմանել իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը՝ 2025 թվականի ապրիլի 19-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ՁԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՓԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ԱՎԱԳԱՆԻ Է. ԹՈՐՈՍՅԱՆ

2025 թ. ապրիլի 16
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ Ու Մ

16 ապրիլի 2025 թվականի N 4-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 8-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարի Փարաքար համայնքի ավագանու կանոնակարգի 8-րդ գլխով սահմանված դրույթները . *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի երդման արարողությունն անցկացնել 2025 թվականի ապրիլի 19-ին, ժամը 12:00-ին:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 40 հասցեում:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը սահմանել համաձայն հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի երդման արարողությանը հրավիրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արմավիրի մարզպետարանի, Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչների, մշակութային, հասարակական գործիչների, պատվավոր քաղաքացիների և այլոց:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպման պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ԱՎԱԳԱՆԻ Է. ԹՈՐՈՍՅԱՆ

2025 թ. ապրիլի 16
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2025թ. ապրիլի 16 -ի N 4-Ա որոշման

# Կ Ա Ր Գ
# ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

1. Նորընտիր համայնքի ղեկավարի երդման արարողության նպատակով՝ համայնքի ղեկավարի ընտրվելուց հետո երրորդ օրացուցային օրը, ժամը 12:00-ին հրավիրվում է ավագանու նիստ: Նիստը տեղի է ունենում համայնքի ավագանու նստավայրում:
2. Համայնքի ղեկավարի երդման արարողության նախապատրաստման և անցկացման կազմակերպման պատասխանատուն «Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկն է (այսուհետ՝ Աշխատակազմ):
3. Աշխատակազմը ժամը 11.30 - 12.00-ն գրանցում է ավագանու անդամներին:
4. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:
5. Նիստը վարում է ավագանու նիստին ներկա՝ տարիքով ավագ անդամը, որը հայտարարում է նորընտիր ավագանու առաջին նիստի բացման մասին:
6. Նիստը վարողը հայտարարում է նիստի օրակարգը:
7. Երդման արարողությանը կարող են ներկա գտնվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչը (համաձայնությամբ), Արմավիրի մարզպետարանից ներկայացուցիչ, Հայ Առաքելական եկեղեցու Արմավիրի թեմի առաջնորդը (համաձայնությամբ), հրավիրված պետական, եկեղեցական, մշակութային և հասարակական գործիչներ և բնակիչներ:
8. Հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:
9. Նիստը վարողն ընտրված համայնքի ղեկավարին հրավիրում է ամբիոնի մոտ:
10. Համայնքի ղեկավարը, աջ ձեռքը դնելով ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վրա, ընթերցում է երդման հետևյալ տեքստը.

   «Ստանձնելով (նշվում է համապատասխան համայնքի անվանումը) համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

   Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

   Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

   և ստորագրում դրա տակ, ստորագրված երդման տեքստը ի պահ է հանձնվում Համայնքապետարանի աշխատակազմ,
12. Ելույթից հետո համայնքի ղեկավարը զբաղեցնում է նախագահողի տեղը և շարունակում վարել նիստը:
13. Համայնքի ղեկավարին և նորընտիր ավագանուն օրհնության իր խոսքն է ուղղում Հայաստանյայց Սուրբ Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմի առաջնորդը,
14. Ողջույնի խոսքով և շնորհավորանքներով կարող են հանդես գալ ՀՀ պետական լիազորված մարմնի ներկայացուցիչը, այլ անձիք:
15. Ողջույնի խոսքերից և ուղերձների հրապարակումից հետո համայնքի ղեկավարը շարունակում է նիստը համաձայն սահմանված օրակարգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ապրիլի 2025 թվականի N 7-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով. Փարաքարի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի հաջորդ հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի մայիսի 15.-ին, ժամը 12:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. ապրիլի 19
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ Ու Մ

19 ապրիլի 2025 թվականի N 6-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի պահանջներով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 6-ի N 12-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 16-ի N 3-Ա որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի օրենքի ուժով ընտրված համայնքի ղեկավար Վալոդյա Լևոնի Գրիգորյանն իր լիազորությունները ստանձնում է 2025 թվականի ապրիլի 19-ին համայնքի բնակիչներին տրված երդմամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԱՎԱԳԱՆԻ Է. ԹՈՐՈՍՅԱՆ

2025 թ. ապրիլի 19
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 19-ի N 6-Ա որոշման

# ԵՐԴՈՒՄ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի օրենքի ուժով ընտրված համայնքի ղեկավար Վալոդյա Լևոնի Գրիգորյանի բնակիչներին տրված**

«Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

Վալոդյա Լևոնի Գրիգորյան ..................................................................

19 ապրիլի 2025 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ապրիլի 2025 թվականի N 5-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ .ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 65-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 1.2-րդ մասով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 19-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ

ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԱՎԱԳԱՆԻ Է. ԹՈՐՈՍՅԱՆ

2025 թ. ապրիլի 19
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2025 թվականի ապրիլի 19-ի N 5 -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ Զեկ.՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ
/Զեկ.՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ
/ Զեկ.՝Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ